

Ա. Կոպ. Ու. Մոսկովսկոյ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ¹

Հայոց հին գրականությունից մեզ հասել են մի քանի պատմական հիշատակարաններ, որոնց գրության ժամանակը մինչև այժմ դեռ չէ որոշված։ Իմաստներների կարծիքները նրանց գրության ժամանակի մասին շատ տարբերվում են, երեք-չորս հարյուր տարի մամանակով։ Ես նկատի ունիմ Ալաթանդիգոսի, Փալատոսի, Ուրենացու Պատմությունները և սրանց հետ միասին Գլխայարանութիւն սուրբ Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսինք, որի գրության ժամանակի մասին առհասարակ տեղեկություններ չկան։ Սրանց գրության ժամանակը որոշելը ոչ միայն դուռ մատենագրական նշանակություն ունի, այլև, որ ավելի կարևոր է, կպարզե մեր եկեղեցական և քաղաքական պատմության հանգամանքները և երևան կհանե այն մտավոր հոսանքները, որոնք գոյութիւն ունին Հայաստանում նրանց գրվելու ժամանակ և որոնց արտահայտությունը կամ հետևանքն են նրանք։ Կսկսեմ Աղաթանդիգոսից, որ հայոց զարձի պատմությունն է Գրիգոր Լուսավորչի ձևաքով։

Նրա համառոտ բովանդակությունը հետևյալն է։ Հեղինակը իրեն կոչում է Աղաթանդիգոս, ծննդյամբ Հռոմ քաղաքից, որ Ուսրուլ Մեծի մամանակ եկել է Հայաստան, մտել է արքունի ծառայության մեջ քարտուղարի պաշտոնով և զրել է Տրդատ Թադավորի հրամանով։ Նա պատմում է, թե Պարսկաստանում Արտաշիւր Սասանյան պարսիկ իշխանը սպանել է Արտափան Թադավորին, որ պարթևական ազգից էր, և ինքն է Թադավորի։ Մեր Ուսրուլ Թադավորը, իբրև Արշակունի, այսինքն նույն պարթևական ազգից սերած, վրեժխնդիր է լինում Արտափանի մահվան, աստը տարի պատեւրադմեր է մղում Արտաշիւրի դեմ և նրան շատ նեղը ձգում։ Արտաշիւրը մեծամեծ խոստումներ է տնում իր նախարարներին, եթև մեկը նրանցից կարողանա դավով սպանել Ուսրուլին։ Այս բանը հանձն է տնում Անակը, որ նույնպես պարթևական ազգից էր, Սուրենյան տոհմից։ Նա իբրև Արտաշիւրից փախստական՝ գալիս է ընտանիքով Հայաստան, սիրալիր ընդունելութիւն է պտնում Ուսրուլից, և երկու տարուց հետո դավաճանորեն սպանում է նրան։ Հայ նախարարները կոտորում են նրան և նրա ընտանիքը։ ադատվում է միայն մի ծծկեր մանուկ, որին ստնտուն փախցնում է Կեսարիա քաղաքը, որտեղ նրան մկրտում են և անունը դնում Գրիգոր։ Այստեղ նա մեծանում է, ուսում է առնում, ամուսնանում է, երկու որդի է ունենում։ հետո նրանց թողնելով՝ դնում, գտնում է Տրդատին, Ուսրուլի որդուն։

¹ Բանավոր գեկուցում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նիստում, 10 ապրիլի 1944 թ.։

որ Արտաշէրի Հայաստան արշաված ժամանակ փախել ապագիւնել էր Հոռոմ և մեծամեծ քաջութիւնները գործելու Տրդատը դառնում է թագաւորը և դաւլիւ է Հայաստան, Գրիգորը հետը երկդայում Անահիտ գիցուհուն զոհ մատուցանելիս Գրիգորը, իբրեւ քրիստոնյա, մերմում է զոհ մատուցանել, գիւմարում է Տրդատի ստիպումներին, անարդում է աստվածները, Տըրդատը ենթարկում է նրան 14 անտանելի տանջանքներին. նա կենդանի է մնում։ Այս ժամանակ հայտնվում է, թե նա Տրդատի հորը, Ռոսրովին սպանող Անակի որդին է, Տրդատը հրամայում է նրան տանել Արտաշատ և ձգել մահապարտների բանար, որ կոչվում էր Ռոր-Վիրապ։ Մի սլառաւ, հրեշտակի հրամանով, ամեն օր նրան հաց ու ջուր է աւելիս, որով ապրեցնում է նրան։

Ճաստէինգ տարի անցնում է սրա վրա։ Հոռոմից մի խումբ կույսեր Դիոկղեսիանոսից փախչելով դալիս են Հայաստան և տեղափոխվում Վաղարշապատի շրջակայքում մի հնձանի մեջ. նրանց մեջ է լինում ցեղեցկուհի Հոբիփոսին։ Տրդատը կամենում է նրան կին առնել, բայց կույսը մերժում է. հսկա թագաւորի հետ կովելով հաղթահարում է և փախչում է պալատից։ Տրդատը կատաղած հրամայում է բոլոր կույսերին կոտորել։ Երկու օրից հետո, երբ կամենում է որսի գնալ՝ սիրտը հովացնելու համար, վրան ժողկոնքով թշուր է դալիս. զազանի նման ընկնում է եղեղնուտների մեջ. վրան խոզի ստեղծեր են դուրս դալիս։ Շատերն էլ հիվանդանում են պալատականներից։ Տեսիլքում հրեշտակը երևում է Տրդատի քրոջ՝ Ռոսրովի գուռի տին և ասում, թե այդ հարվածներից բժշկութուն կարող են գտնել Գրիգորի ձեռքով։ Տեսիլքը կրկնվում է։ Մարդ են ուղարկում Արտաշատ, Գրիգորին կենդանի հանում են Վիրապից, մաքրում, հալցնում են, բերում են գեպի Կաղարշապատ։ Ճանապարհին ընդառաջ է դուրս դալիս գաղանացած Տրդատը, ծուռն է չոքում և աղաչում՝ ներել իրեն գործած հանցանքները։ Գրիգորը ազդեցիկ է նրան փոքր ինչ զգաստացնում է, բանակաճութունը վերականգնում։ Վաղարշապատում նրա առաջին գործն է լինում ամփոփել նահատակված կույսերի մարմինները և վկայարաններ շինել։ Ապա սկսում է քարոզել քրիստոնեական հավատը, հետզհետե բժշկելով թագաւորին։ Տեսիլք է տեսնում ու պատում, թե պետք է չորս տաճար շինել։ Տրդատին էլ հրեշտակը երևում է տեսիլքում և պատվիրում, որ բրիգորին իրենց հովիվ ընտրեն։ Նրան մեծ շքանշանով ուղարկում են Կեսարիա, որտեղ նա սնվել էր, այնտեղ Ղեռնգիտս պատրիարքը նրան ձեռնադրում է Հայաստանի եպիսկոպոս։ Ղեռնգիտսը թուզի է դրում Տրդատին, թե այսուհետե ուխտ լինի, որ հայոց եպիսկոպոսները ձեռնադրութուն ստանան Կեսարիայում։ Գրիգորը փերագասնում է Հայաստան։ Տրդատը նրան գիւմարում է գործով։ Եւփրատ գետում Գրիգորը մկրտում է Տրդատին բնաանիքով, պորքի և մոգովրդի մեծ բազմութեան հետ։ Այնուհետե սկսում է հովվական գործունեություն։ Կործանում է հեթանոսական մեհյանները, հիմնում է եկեղեցիներ, բերել է տալիս քահանաներ, բաց է անում դպրոցներ, որտեղ քրմերի որդիք պետք է սովորեին՝ ապագա քահանաներ դառնալու համար։ Ձեռնադրում է թեմերի եպիսկոպոսներ, քարոզութունը տարածում է Հայաստանի սահմաններից դուրս, մինչև Սասքութներին երկիրը։ Տրդատի հետ դրնում է Հոռոմ կոստանդիանոս կայսեր այցելութեան։ Տեղի է ունենում Նիկիոյ ժողովը, ուր Գրիգորն ուղարկում է իր կրտսեր որդուն՝ Արիստակեսին։

ներառադարձից հետո այլևս ժողովրդին չի երևում, ճշնում է լեռնե-
րում ու վախճանվում:

Այս պատմությունը դեռ VIII դարում թարգմանվել է հունարեն: Սրանից
անկախ դրություն ունին համառոտ խմբագրություններ վրացերեն, ասո-
բերեն և իսպաներեն: Ակադ. Ն. Մաուը դրավ նրա տարբերեն խմբագրու-
թյունը. սկզբից թերի, որը հրատարակեց ուսուցչին թարգմանությամբ
հանդերձ: Կան հայերենի և տարբերների մեջ կարևոր տարբերություններ,
որոնցից մեկն էլ այն է, որ տարբերներում չկա սեղեկություն, թե Տրդա-
տին հայտնել են, որ Բրիգորը Անակի որդին է:

Ե՛րբ էլ զբված այս պատմությունը: Սկզբում կարծում էին, թե քանի
որ հեղինակը գրել է Տրդատի հրամանով, ուրեմն պետք է զբված լինի: IV
դարի սկզբներում հունարեն լեզվով, որովհետև այն ժամանակ հայերեն
գիր դեռ չկար, հետո V դարի 30—40-ական թվականներին Կորյունը
թարգմանել կամ խմբագրել է, մոռնելով զանազան հատվածներ իր «Վարք
սրբոյն Մեսրոպայ» զբվածքից: Այս կարծիքն այժմ ընդունելի չէ այլևս:
Այժմ առհասարակ ընդունված է, որ Աղաթանգեղոսն կեղծ անուն է, որ
հունարեն նշանակում է բարի ավետարներ, կամ բարի ավետիք (ավետա-
բան), որ նրա անունը կրող Պատմությունը Տրդատի ժամանակ ու նրա
հրամանով չէ զբված, այլ շատ հետո: Կորյունի մոտ լեզուն ու ոճն էլ
բոլորովին տարբերում են Աղաթանգեղոսի պարզ լեզվից ու ոճից: Երկու
զբվածքի մեջ կրկնվող հատվածները Կորյունի մեջ ընկալան ու սեղին են,
իսկ Աղաթանգեղոսի մեջ՝ անբնական և անտեղի: Կորյունը Գրիգորին
նույնիսկ չգիտե, ինչպես քիչ հետո կտեսնենք: Մյուս կողմից՝ Ն. Մաուը
ենթադրում է, թե հայերեն Աղաթանգեղոսը այժմյան խմբագրությամբ
զբված պետք է լինի VIII դարում, որ նույնպես անընդունելի է: Դ. Փար-
պեցին, որի Պատմության գրությունն ժամանակը V դարի վերջին տասնա-
մյակում որևէ կասկածի ոչ ոք չէ, գիտե Աղաթանգեղոսին և նրան կոչում
է հայոց առաջին պատժագիր: Պետք է ուրեմն ուրիշ միջոց գտնել Աղա-
թանգեղոսի գրության ժամանակը ճիշտ որոշելու համար:

Այս միջոցը մատակարարում են մեր հին մատենագիրները: Աչքի
ընկնող երևույթ է, որ մինչև V դարի վերջերը դրույ հեղինակներից
Փափոստը, Խորենացին, Փարպեցին շատ լավ գիտեն Աղաթանգեղոսին,
հաճախակի հիշում են Գրիգոր Լուսավորչին, այնինչ նույն դարի առաջին
կեսում գրող հեղինակները, մինչև Եղիշե Ներսոսյան, ոչ Աղաթանգեղոսին
գիտեն, և ոչ Գրիգորի անունն են տալիս: Կորյունը, որ գրել է «Վարք սրբոյն
Մեսրոպայ», որի մեջ հաճախ հիշում է Սահակ կաթողիկոսին՝ ոչ մի անգամ
չի հիշատակում, թե նա Գրիգոր Լուսավորչի զարմից է: Լաղար Փարպե-
ցին պատմում է, թե զբերի գյուտից հետո Մեսրոպը մի քանի քահանայի
հետ ներկայացան Սահակ կաթողիկոսին և ասացին. «Ինչպես քո նախնին՝
սուրբ Գրիգորը լուսավորեց մեր հայերենը, այնպես և դու, նրա գովակը,
լուսավորիր մեր մտքերը, ձեռք զարկ Մուրր Գրքի թարգմանությանը: Դա-
ղարը առիթ է գտնում սուրբ Գրիգորին հիշելու, իսկ Կորյունը, որ ավելի
մոտ է կանգնած Սահակին՝ այսպիսի բան չի հիշատակում: Նա Գրիգորին
չգիտե:

Եղիշեն, Վարդանանց պատերազմի պատմության հեղինակը, գրում է
թե կռվի նախընթաց գիշերը Ղևոնդ երեցը քարոզ է խոսում, որով հորդո-

բռնւմ է զինվորներին՝ աքիսնալ հալատի համար մղվող մարտի մեջ, չվա-
խենալ մահից, և այս առիթով բերում է մի շարք օրինակներ սուրբ Գրը-
քեց՝ «Ուրիշեցեք, առաքելներ, Մովսես մարգարեին, Փենեհեղին, Եղիա մար-
ուարեին, Մակարայեցոց» և այլն: Շատ տեղին կլինեն, նույնիսկ տնօր-
մեշտ էր հիշել ս. Գրիգորին, որ հալատի համար շարչարանքներ կրեց և
հայ ժողովուրդը ճշմարիտ կրոնի դարձրեց. անհրաժեշտ էր խնդրել Գրիգոր
Լուսավորչի օրհնութիւնը հալատացյալ զորքի վրա. բայց ոչ մի հիշատա-
կութիւն չկա Գրիգորի անվան: Դեռ ավելին պետք է ասենք: Եղիշեն պատ-
մում է, թե հայոց եկեղեցական-քաղաքական ժողովը, Հովսեփ Եղիսկրպոսի
զինավորութեամբ, Վասակ մարզպանի, Երջապուհ Ռմբոսյանի, Վարդան
սղարապետի մասնակցութեամբ, պապատանքի թուղթ ևս զրում Թեոդոս
(Փոքր) կայսրին, խնդրելով օգնութիւն պարսիկների դեմ: Թղթի մեջ հի-
շում են, թե մեր նախնին՝ Տրդատը, մանկութեան հասակում իր հայրա-
սպան հորեղբայրներից փախչելով ապավինեց Հոռոմ և Հուսիս ս. Եպիսկոպո-
սից ընդունեց հալատն ի Գրիստոս և լուսավորեց հայ աւանդին երկրները:
Եղիշեի հաղորդած այս տեղեկութիւնը ամբողջապէս խորտակում է Ալա-
թանգեղոսի Պատմութեան հիմքը: Այստեղ ոչ Անակ կա, Գրիգորի հայրը,
Ռոստով թագավորին սպանող, այլ Ռոստովի եղբայրներն են նրան սպանելը,
ոչ Գրիգոր կա, Տրդատին մկրտող և Հայաստանը քրիստոնէութեան դարձնող,
այլ Հուսիս Եպիսկոպոսն է նրան քրիստոնէյա դարձրելը: Վարդապետն է ար-
դար Եղիշեի բերած ժողովական թուղթը, թե Եղիշեի շարադրածն է
(ինչպես ընդհանուր սովորութիւն էր այն ժամանակ)՝ երկրորդական նշա-
նակութիւն ունի այս հարցում. երկու գեպքումն էլ հետեւանքը նույնն է.
Եղիշեի Պատմութեանը՝ զրկած ժամանակ Գրիգորը անհայտ էր հայ ժողո-
վրդին, ուրեմն ղեկ չկար Ալաթանգեղոսի պատմութեանը, որն առաջինն
ստեղծեց Գրիգորին իբրև Հայաստանի լուսավորիչ: Եղիշեի Պատմութեանը
զրկած է պարսից Պերոզ թագավորի օրդ տարում, այսինքն՝ փրկական
խօսակցանի 461 տարում: Եշանակում է՝ Ալաթանգեղոսի Պատմութեանը
զրկած է 461 թվականից հետո: Սա այն կետն է, որից առաջ չէր կարող
զրկած լինել Ալաթանգեղոսը, terminus ante quam non: Գրութեան վերջին
կետը (terminus postquam non) որոշելու համար պետք է նկատի ունենաք,
որ Փալատոսը շուրջ 475-ին դիտե Ալաթանգեղոսի Պատմութեանը՝ ման-
րամանորէն, պիտե նաև «Ալաթանգեղոսի Թագեղոսի առաքելոյ», որ Ալա-
թանգեղոսից հետո է զրկած, ինչպէս հետո կտեսնենք: Ուրեմն, մոտավոր
հաշվով Ալաթանգեղոսի Պատմութեանը պետք է զրկած լինի 461—465 թվա-
կաններին, իսկ Վաթաթանգեղոսի՝ մոտավորապէս 466—470 թվական-
ներին:

Ալաթանգեղոսը իր բովանդակութեամբ շատ բարդ մատենագրական
ստեղծված է և կարոտ է մանրամասն ընդարձակ ուսումնասիրութեան: Եւ
բայց եւ թողնում այն հարցերը, որոնք վերաբերում են նրա առաջին և
հորինվածքի տեխնիկային, և կանգ կառնեմ նրա ճարտարագիտական ոճի—
տեխնիկային վրա, որ կապ ունի ժամանակագրական հարցի հետ:

Ալաթանգեղոսի Պատմութեան մեջ ակնբախ նկատվում է մի տեղ-
դեհ՝ հայոց եկեղեցուն հռոմեական ծագում տալու, հայոց եկեղեցին հռոմե-
կան եկեղեցու հետ կապելու: Նրա՝ մեջ ամեն ինչ հռոմեական է, բացառու-
թեամբ Գրիգորի ծննդյան—Անակի օրդին լինելուն, որ կատարված է հա-

կառակ պատմություն—(արարեբեհներ չունի այս տեղեկությունը, չգիտե և չգիշեն), լուկ այն նպատակով, որ Հայաստանի հայրապետները բարձր պարթևական ծագում ունենան հավասար հայ Արշակունի թագավորներին և դեռ ավելին՝ Այս մի կետից դուրս՝ Գրիգորը ամեն բանով դուրս հույն է ու հունախոս. անունը հունարեն Ὀγυγώσιος, որ նշանակում է արթուն, հսկող¹, մկրտվել և ուսում է ստացել, ապրել ու ամուսնացել է Կասպաղով-կիայի Կեսարիայում, Հունաստանում, որտեղից նա գնացել է Տրդատի մոտ և նրա հետ եկել է Հայաստան՝ Եպիսկոպոսական ձևնադրություն է նա ստանում դարձյալ Կեսարիայում, հույն Ղևոնդիոս արքեպիսկոպոսից հու-նական ծեսով. Ղևոնդիոսը Տրդատին գրած թղթում պայման է դնում, որ այնուհետև ևս հայոց եպիսկոպոսները (կաթողիկոսները) ձևնադրություն ստանան Կեսարիայի աթոռից, ինչպես և իրոք կատարվում էր բավական երկար ժամանակ:

Աղաթանդեղոսում այսպես պարզ նկատված հունական օրինադրության մի բնական ու անխուսափելի ուսուցիչ էր Հայաստանում վաղուց հիմ-նադրված ասորական օրինադրության ղեմ, և պետք է արտահայտվեր հատ-կապես այս ժամանակներում:

Հայերը հնուց ի վեր սերտ հարաբերության մեջ էին իրենց մերձա-վորադուշին հարևան ասորիներին հետո Ասորերենից փոխ առնված հարյուրա-վոր բառեր (կացին, կաթսա, շղթա, դուր, կասկարա, ծնծղա, մկրատ, ցույ-պա, խանձարուր, ուրբաթ, շաբաթ և այլն և այլն) ցույց են տալիս, որ այս հարաբերությունը գոյություն ունի նախաքրիստոնեական ժամանակ-ներից ի վեր և տարածվում էր հայ ժողովրդի տնտեսական, ընտանեկան և հասարակական կյանքի վրա: Երեստոնեությունը Հայաստան մտնելուց հետո, քանի որ դեռ հայերին գիր ու ժամերգություն չկար, Հայաստանի պարսկական բաժնում ժամերգությունը կատարվում էր ասորերեն լեզվով, ասորի հոգևորականների ձեռքով կամ հայերի, որոնք ծանր պայմաններում գնում էին Ասորիք՝ ասորերեն սովորելու, որպեսզի Հայաստան վերադառ-նալով հայոց եկեղեցիներում հայ ժողովրդի համար ժամերգություն կատա-րեն ասորերեն լեզվով, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում: Երբ Մես-րոպ Մաշտոցը այս չարիքին դարձան տանելու համար մտածեց հայերին այրուրեն ստեղծել, նա Ասորիք գլխից (և ոչ Բյուզանդիոն)՝ ասորի գիտ-նականների հետ խորհրդակցելու, նրանցից օգնություն գտնելու համար: Նա հետը աշակերտներ տարավ, մի մասը թողեց Եղեսիայում՝ ասորերեն սովորելու, մյուս մասը, հունարեն սովորելու համար, ուղարկեց ասորոց Սառսաստ քաղաքը (և ոչ Բյուզանդիոն): Գրեթե գյուղացի հետ Ս. Գրեթի հայերեն թարգմանությունը կատարվեց ասորական թարգմանությունից (և ոչ հունարեն բնագրից), ասորերենից էին հայերեն թարգմանվում գրքեր, որոնց բնագիրը հունարեն էր (Եփեսեոսի եկեղեցական պատմու-թյունը):

Սակայն մի բարեպատեհ դիպված վերջ գրեց այս տարապայման ասո-րաթիրությունը: Բյուզանդիոնը թույլ չէր տալիս, որ հայերեն գրադիրու-թյունը և հայերեն ժամերգու-թյունը կիրառվեն Հայաստանի բյուզանդա-

¹ Գրիգոր Նարեկացին Նարեկ աղոթամատույցի ամեն մի գլխի վերնագրում գնում էր իր անունը՝ հայերեն «Նեկոզ» բառով—«Վերստին յավելուած կրկին հեծութեան նորին Նեկոզի» (այսինքն՝ նորին Գրիգորի):

կան մասում եւս Այս արգելքը վերացնելու համար հարկ եղաւ Մեսրոպ Մաշտոցին ուղարկել Բյուզանդիոն։ Մաշտոցը այնտեղ ֆեսց մոտ մի տարի ժամանակ, մինչ բանակցութիւններ էին վարվում Բյուզանդիոնի, Կեսաբիայի, Կուցե և Սահակ կաթողիկոսի միջև։ Այս այցելութիւնը Մեսրոպի վրա այնպես ազդեց, ինչպես ներկայումս կազդեր մի մարդու վրա, որ զավառական քաղաքից հանկարծ ընկնում է մի մեծ մայրաքաղաք։ Մեսրոպը այս մի տարվա ընթացքում առիթ ունեցաւ ծանոթանալու հունական կուլտուրային, հույն գիտնական վարդապետներին, հույն դպրոցների և զբաղանության, և ընդհանրապես հունական կարգերի հետ, և համոզվեց, որ զրանք շատ և շատ բարձր են ասորականից։ Նա ստացաւ իր ցանկացած թույլտվութիւնը՝ հունական բաժնում եւ հայերեն դրագիտութիւն և ժամերգութիւն տարածելու։ Բայց երևի՝ ոչ առանց փոխադարձ զիջման, այն է՝ որ Սուրբ Գրքի թարգմանութիւնը վերանայլի և ուղղվի ըստ հունարեն բնագրի և որ հայ ուսանողութիւնն այնուհետև Բյուզանդիոն ուղարկվի բարձրագույն ուսում ստանալու, փոխանակ Ասորիք ուղարկվելու։ Շատ հավանական է, որ Մեսրոպն էլ ինքնաբերաբար այս բաները մտածած լինելու։ Այսպես թե այնպես՝ Մեսրոպի ուղևորութիւնը Բյուզանդիոն շրջագաւրձ կետ եղաւ հայերի օրիննտացիայի մեջ զեպի հունական կուլտուրան։ Նկատվում է, որ նրա վերադարձից հետո ավազ աշակերտները Բյուզանդիոն են ուղարկվում թարգմանչական աշխատանքի համար։ Ս. Գիրքը, որ թարգմանված էր ասորերենից, նորից թարգմանվում կամ ուղղվում է ըստ հունական օրինակի, և նոր աշակերտներ իմբերով ուսանելու են ուղարկվում Բյուզանդիոն և Աղեքսանդրիա։ Ասորիքը այլևս մոռացվում է։

Այս աշակերտները, որոնք մեր մատենագրութեան մեջ հայտնի են կրտսեր աշակերտներ կամ կրտսեր թարգմանիչներ անունով, իրենց ուսումնի ավարտելուց հետո վերադառնում են հայրենիք և այստեղ ցրածում իբրև թարգմանիչ, ինքնուրույն հեղինակ, ուսուցիչ կամ լոկ հոգևորական, նայելով ամեն մեկի պատրաստութեան, ճաշակին կամ մեծավորների ընտրութեանը։ Նրանք ընդհանրապես ավելի լավ պատրաստված էին լեզվի և գիտութեան կողմից, ավելի լուսավոր, առաջադեմ հայացքներ ունեին, քան ասորական դպրոցների սաները և անպայման սիրող էրն հունական կուլտուրայի, հունասեր էին։

Ահա այս՝ հունական ոգով դաստիարակված խմբից որևէ թարգմանչի դործն է Աղաթանգեղոս կեղծ անունը կրող պատմա-վկայաբանական հիշատակարանը, որ մի խոշոր հարված էր հասցնում տիրող ասորական օրիննտացիային և մյուս կողմից՝ կապ էր հաստատում հայոց և հունաց եկեղեցիների մեջ։ Նշանակալից է, որ այս զրվածքը երևան է գալիս հենց Գյուտա կաթողիկոսի ժամանակ, որ հայրապետական աթոռը զբաղում է տասը տարի, 461—471 թվականներին։ Գյուտա, ինչպես ինքը հայտնում է, ուսում էր առել Բյուզանդիոնում և շարունակ թղթակցութիւն ուներ այնտեղի իր ծանոթներին հետ, լավ հմուտ էր հայերեն և հունարեն լեզուներին, ինչպես վկայում է Դ. Փարպեցին։ Հունաստերութեան մեջ մեղադրվելով՝ պարսից թագավորի հրամանով հրաժարեցրած էր կաթողիկոսական պաշտոնից։ Նա հայտնի է նաև իբրև հայոց եկեղեցու ժամերգութիւնը բարեկարգող ու ձոխացնող, նրա անունը միշտ մակադրվում է մեր ժամագրերների վրա՝ Հոհան Մանդակունու հետ միասին։ Շատ հավանական է, որ հենց Գյուտա

կաթողիկոսն էլ եղած իննի Ազաթանգեղոսի անունը կրող Պատմության իսկական հեղինակը: Եթե այս պատմությունն ունեցել է մի հեղինակ, ինչու այս հեղինակը չէր կարող լինել Դյուտ կաթողիկոսը, որ ինքի գիտական պատրաստությամբ, թե հունասիրությամբ, թե եկեղեցական-գրական պարասմունքով և թե իր ասլած ժամանակով շատ լավ հարմարում է այս ննթաղությունը:

Ազաթանգեղոսի Պատմության երևան գալը մի խոշոր հարված էր ասորական հոծ և ուժեղ խմբի համար: Սրանք լուռ չմնացին և իրենց կողմից փորձեցին մի հակառակած հասցնել հունասերներն իմրին, ստեղծելով մի ուրիշ պատմություն հայոց պարձին ի քրիստոնեություն, որ ասորական ծագում ունենար և իր փայլով նսեմացներ հույն Դրիգորի փայլը: Այս մտադրությունն իրագործելու նպատակով, նախ նրանք ասորերենից թարգմանեցին Լարուրնայի (Սորենացու Ղերուրնայի) Պատմությունը, որի մեջ պատմվում է եղեսիայի Աբգար թագավորի թագակցությունը Բրիստոսի հետ, նրա համբառնալուց հետո նրա 72 աշակերտներից մեկի՝ Թադեոսի եղեսիա գալը, Աբգարին բժշկելն ու մկրտելը, եղեսիացոց յարողելն ու քրիստոնյա դարձնելը: Աղղեին իր փոխանակ եպիսկոպոս ձեռնադրելը, մահն ու թաղումը եղեսիայում: Սակայն այստեղ հայ թարգմանիչը, հայտնի դիտավորությամբ, իրեն թույլ է տվել մի դրական նենդություն կատարել: Այնտեղ, որ ասորական բնագրում գրված էր, թե Թադեոսը «օրհնեց ժողովրդին և վախճանեց»՝ հայ թարգմանիչը գրել է. «օրհնեց ժողովրդին և նախապարհ ընկավ դեպի Արևելք»: Այս փոփոխության միջոցով հող պատրաստվեց Թադեոս առաքյալին Հայաստան բերելու իրեն քարոզիչ, նահատակ և Հայաստանի առաջին լուսավորիչ:

Այս կեղծ պատմանդանի վրա է գրված «Վկայաբանութիւն Ս. Թադեոս առաքելոյն և Սանդխտոյ կուսին»: Թադեոսը գալիս է Հայաստան, գնում է Արտազ դավառի Շավարշան ավանը, որ հայոց Սանատրուկ թագավորի ամարանոցն է եղել: Սկսում է քրիստոնեական հավատը քարոզել, շատերը հավատում են ու մկրտվում, սրանց թվում և Սանդուխտը՝ Սանատրուկի ղուստրը: Թագավորը հրամայում է հավատացյալներին կոտորել, Սանդուխտին բանտարկել, 33 բանտապաններ հավատի են գալիս: Մի իշխան է ուղարկվում բանտը Սանդուխտին համոզելու, բայց նա ինքն ես հավատի է գալիս 50 ընկերներով: Նոր կոտորածներ թագավորի հրամանով: Սանդուխտին բերում են թագավորի ստաջ, ողորում, համոզում է, բայց իզուր: Թագավորը հրամայում է նրան կապել—կապելը լուծվում են: Ուրիշ մի իշխան, որ գալիս է Սանդուխտին համոզելու, նույնպես հավատի է գալիս և նահատակվում է մի քանի ընկերով: Նահատակվում է նաև մի իշխանուհի: Չարմանդուխտ անունով, թագավորի մերձավորներից, Թագավորը հրամայում է Սանդուխտին սպանել: տեղի են ունենում հրաշքներ, սխալմամբ սպանվում է ինքը գահճապետը, երկու հազար մարդ նորից հավատի են գալիս: Վերջապես նահատակվում է Սանդուխտը: Բռնում են Թադեոսին, ձգում են գաղանների առաջ. նա անխառն է մնում: ձգում են հնոցի մեջ—կրակը չի դիպչում: Պարձյալ 433 մարդ հավատի են գալիս, մկրտվում ու նահատակվում են: Տանում են Թադեոսին գլխատելու, գահիճը սխալմամբ իր եղբորն է սպանում, որին կենդանացնում է Թադեոսը, Պարձյալ 720 մարդ հավատի են գալիս: Վերջապես գլխատում են Թադեոսին: վեժը պա-

տառվում է և նրա մարմինը ավտոփում: Դարձյալ 3400 հոգի հավատի են դավիա:

Այս ստահող ու անհամ վկայարանությունն ստեղծողի գիտավորությունը շատ պարզ է—հունասիրական Աղաթանգեղոսին մի ասորական հակակշիռ ստեղծել, նրանից ավելի փառավոր, Հայաստանի լուսավորությունը ծագեցնելով Ասորիքից: Այս գիտավորությունը նա կատարելապես իրագործել է, բացի պատմական ատուցությունից ու մատենագրական ճաշակից: Արտաբուստ վկայարանությունը ամեն բանով բարձր է Աղաթանգեղոսից: Հուն քարոզչի փոխանակ՝ Դրիստոսի առաքյալ խոստովանողի (հավատի համար չարչարանք կրողի) փոխանակ՝ վկա (հավատի համար նահատակված), Հոփսիմեի, Գայանեի և 35 ուրիշ կույսերի փոխանակ՝ Սանդուխտ, թագավորի զուստրը, Ջարմանդուխտ իշխանուհին, թագավորի մերձավորը և հարյուրավոր նահատակներ: Կեսարիայի փոխանակ՝ Եղեսիա:

Հայոց եկեղեցին հոմարությունը ընդունեց այս վկայարանությունը—(ավելորդ թիֆին փոր չի ծակում)—և Թադևոս առաքյալը Բարթողիմեոսի հետ հաջակեցին հայոց առաջին լուսավորիչներ, այնպես որ Դրիդորը զարձավ ըստ ժամանակի երկրորդ լուսավորիչ, և հայոց եկեղեցին իրեն վերագրեց «առաքելական» պատվավոր կոչումը: Իսկ սրանք պաշտոնական՝ ձևական կոչումներ են. իրապես Դրիդորը քնաց ամենամեծ ժողովրդական ազդեցիկն սուրբը, սրին ամեն սր ամեն հայոց եկեղեցում կոչում են բարեխոս Մարիամ աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, առաքյալների ու մարգարեների հետ, անվանելով «Մեծ խոստովանող Դրիստոսի, պատուական հայրապետն մեր, տէր սուրբն Դրիդորիս, լուսաորթին Հայաստանույց աշխարհիս: Մինչդեռ Թադևոսի, Բարթողիմեոսի և Սանդուխտի համար միասին տարեկան մի տոն է սահմանված, միայն Դրիդորի համար տարեկան երեք տոն է սահմանված և առանձին տոն Հոփսիմյանց և Գայանյանց համար:

Որ այս վկայարանությունը հորինված է Աղաթանգեղոսից զրդված և նրան հակակշիռ՝ երևում է նրա գրություն մամանակից: Նա երևան է գալիս Աղաթանգեղոսից հետո և Փափստոսից առաջ, այսինքն 461—475 թվականներին միջնադարում: Որ նա զրված է Աղաթանգեղոսից հետո, երևում է այն հանգամանքից, որ Աղաթանգեղոսի հեղինակին հայտնի չէ Թադևոս առաքյալի Հայաստան գալու և այստեղ նահատակվելու պատմությունը: Գրիդորն իր ընդարձակ Վարդապետության մեջ, որ Աղաթանգեղոսի կեանք է զրավում, ի միջի այլոց պատմում է, թե Դրիստոսի համբառնալուց հետո նրա աշակերտները զրվեցին զանազան աշխարհների քարոզելու նպատակով, և մի առ մի թվում է, թե որ առաքյալը որ աշխարհը գնաց: Բռն սեղն էր և պոհանջվում էր այստեղ չիշել, թե Թադևոսն եկել է Հայաստան. բայց այսպիսի հիշատակություն չկա (և չէր էլ կարող լինել, քանի որ Թադևոսը մեռած ու թաղված էր եղեսիայում և Հայաստան ոտք չէր կոխել): Նշանակում է, որ 461—465 թվականներում, երբ զրված է Աղաթանգեղոսի Պատմությունը, Թադևոսի վկայարանությունը գեո գոյություն չունեի, այլապես անկարելի կլինեի նրան զանց անել, չհիշել: Մյուս կողմից՝ տեսնում ենք, որ Փափստոսը լավ գիտե այս վկայարանությունը: Նա Ստանաբուլին կոչում է «առաքելապան» և Հայաստանի հայրապետական

աթոռը կոչում է ռաթոռ Թաղևոսի: Ուրեմն Թաղևոս առաքյալի վկայաբանությունը գրված է մոտավորապես 470 թվականին:

Այս տեսությունը՝ Ազաթանդեղոսը և Վկայաբանությունը այլևս դադարում են լինել անհոգ, պատահական, իրար հետ կապ չունեցող մատենագրական հիշատակարաններ, այլ դառնում են դրական արտահայտությունների երկու հակադիր մտավոր հոսանքների, հունականի և ասորականի, որոնք երևան եկան Հայաստանում V դարի 60-ական թվականներից սկսած, հունասեր իսրայիմելիների գործունեությունն սկսվելու հետևանքով: Երկու հիշատակարանների ժամանակը ճիշտ համապատասխանում է այս երկու մտավոր հոսանքների ընդհարման առաջին շրջանին, որ հետզհետե ուժեղանալով՝ կատարյալ մաքսուման ու բացարձակ հալածանքի փոխվեց հույն դարի վերջերում և այնուհետև ավելի սաստկացավ քաղկեդոնական և հակաքաղկեդոնական բանաձևի տակ: Երկու զրկածքների մատենագրական սլակոնությունը կ'ընդհանրվի և ընդհանրապես կ'առնի իր արմատը հունական զարգացման հաշվին ու հմտությունը հանդուգ ասորականի: Այնպես որ այս երկու զրկածքը պատահական և անկապ երևույթներ չեն, այլ հաստատուն հոգ ունին Հայաստանի մտավոր կյանքի իրականություն մեջ և նրա հայտարարներն են:

Անցնում եմ Փափսոսին: Երա հեղինակն էլ անհայտ է, որ թագանդիլ է հույն Փափսոս ևսլիսկոպոսի անվան տակ, որ եղել է Նեքսես Մեծին սարկավագ ձեռնագրողը և նրա ներքին 12 խորհրդակից ևսլիսկոպոսներից մեկը: Անձանոթ հեղինակը հունական կրթություն չէ ստացել, այլ Հայաստանի ինքնարույս ծագիկ է, ազգային-ժողովրդական ավանդությունների սիրող ու ժողովող, երկու մտավոր հոսանքների մաքսումից հեռու, որ համասարապես բնորոշում է թի. Ազաթանդեղոսի և թի. Վկայաբանության տենդենցները:

Նրա Պատմության գրության ժամանակի մասին էլ հայացքները շատ տարբերվում են: Վենետիկի մխիթարյանները կարծել են, թե հեղինակը հույն է և գրել է հունարեն՝ [V դարում, որ հետո թարգմանվել է հայերեն: Ավելի նոր հեղինակներ, Շիլլեր [Թաղևոսյան], Այոնց, Պրիկիկճյան, Նույնպես գտնում են, որ Փափսոսի Պատմության սկզբնագիրը հունարեն է եղել, որովհետև Պրոկոպիոս հույն պատմադիրը (V դար) ընդարձակ պատմում է Արշակ թագավորի վրա կատարված հմայություն մասին Հայաստանի հողով ու ջրով, նման Փափսոսին, և ասում է թի. այսպես գրված է նրանց (Հայոց) պատմության մեջ: Սրանից այս բանասերները ևսլիսկոպոսն են, թի. ուրեմն Պրոկոպիոսը կարգացել է Փափսոսի Պատմությունը՝ հունարեն լեզվով: Գարծեն Պրոկոպիոսը չէր կարող հայերեն կարգացող ու հասկացող լինել, ինչպիսին էր Ան. Ներակունու ուսուցիչ Տյուրիկեսը մի դարձհետո, կամ չէր կարող մի հայի բերանացի պատմածից դրի առած լինել Արշակի պատմությունը, ինչ-ինչ սխալներ անելով պատմության մեջ և Արշակի անվան տեղ մի ուրիշ օտար անուն գործածելով:

Փափսոսի գրության ժամանակը, սակայն, պարզ է. նա գրել է Ազաթանդեղոսի և Վկայաբանության զրկելուց հետո, այսինքն 470 թվականից հետո, և սկսում է այնտեղից. որտեղ վերջացնում է Ազաթանդեղոսը, այսինքն Գրիգորի և Արիոտակեսի հաջորդ Վրթանեսից և Տրդատի հաջորդ Խոսրով Կոտակից: Դ. Փարպեցին էլ կոչում է նրան ևրկրորդ պատմագիր, շարունա-

կող առաջին պատմագրի՝ Ագաթանգեղոսի Պատմությանը Մյուս կողմից, այս Պատմությունը զբաղված է խորենացու Պատմությունից առաջ, որովհետև խորենացին, առանց անունը տալու, օգտվում է նրանից՝ Խոսրովի և հաջորդների պատմությունները զբաղված էլ յանի որ խորենացու Պատմությունը, ինչպես քիչ հետո կտեսնենք, զբաղված է V դարի 80-ական թվականների կեսերին, ուրիշ՝ Փավստոսի պատմության զբաղված ժամանակի սահմանները կազմում են մի կողմից՝ Ագաթանգեղոսի և Վկայարանության զբաղված ժամանակները, այսինքն մոտ 470 թվականը, և մյուս կողմից՝ խորենացու Պատմության՝ մոտ 485-ին, ուրեմն ժողովրդագրական 475—477 թվականներին. այսպիսով Փավստոսի Պատմությունը մի տրամադրված է կազմում Ագաթանգեղոսից խորենացուն անցնելու:

Խորենացու Պատմությունը զբաղված ժամանակի նկատմամբ տասնյակ դարերով ոչ մի կասկած չէր հարուցանում: Դարերից ի վեր բոլորը համոզված էին, թե հեղինակը, ինչպես ինքն է վկայում իր մասին, եղել է Սահակի և Խոսրովի աշակերտ և նրանց ձեռքով ուղարկվել է Աղեքսանդրիա բարձրագույն ուսում ստանալու, ուրեմն ապրել ու գրել է V դարում: Բայց անցյալ դարում սկսեցին այս մասին կասկածներ հայտնվել. նրա Պատմության մեջ նկատվեցին փաստեր, որոնք տեղիք ստին կարծելու, թե նրա Պատմությունը ավելի ուշ ժամանակի գործ է: Այս կասկածներն ուժեղացան, ապացույցների բնույթ ստացան մանավանդ անցյալ դարի 90-ական թվականների սկզբին, երբ ֆրանսիացի հայագետ կարիերը հանդես եկավ մի շարք մեղակացություն հղածներով: Ես ցույց տվեց (ինչպես դեռ շատ առաջ ցույց էին տվել Վիսսոնյան եղբայրները խորենացու լատիներեն թարգմանությունից), թե Կոստանդիանոս կայսրի բորոտություն և թմկություն պատմությունը, որ գետնիցված է խորենացու Պատմության Բ գրքի 83-րդ գլխում, ամբողջական փոխ է առնված Սեդրեսարոսի Վարքի հայերեն թարգմանությունից, որ կատարված է VII դարի 70-ական թվականներին: Սրան հաջորդեցին ուրիշ մեղակացություններ, ուրիշ փոխառություններ VII—VIII դարի այլ հեղինակներից: Դեռ մոտ ժամանակներս մի բանասեր հայտարարեց, թե Պատմությունը զբաղված է IX դարի 20-ական թվականներին Ղևոնդ վարդապետի ձեռքով, որ «Մովսես» և «Խորենացի» անունները կեղծ են. այդպիսի անունով հեղինակ չէ եղել: Մի ուրիշ բանասեր էլ 10 տարի առաջ խորենացու Պատմության զբաղված ժամանակը իջեցրեց մինչև IX դարի 60-ական թվականները: Ընդհանուր սրամաղրություն ստեղծվեց, թե խորենացու անունը կրող Պատմությունը մի կեղծիք է՝ մի ինքնակոչ խոխայի գործ, որ զիմակավորվել է իրի V դարի հեղինակ, Մեսրոպ Մաշտոցի աշակերտ: Բայց այս ընդհանրացած կարծիքը մի խոշոր անարդարություն էր մեր պատմության բաղմերախտ հեղինակի նկատմամբ և մանավանդ խոշոր սխալ այսպիսի կարևոր դրական հարցում, հետևանք երևույթների սխալ՝ միակողմանի բացատրության: Բանն այն է, որ խորենացու Պատմության մեջ նկատված անախրոնիզմները բացատրելու համար սխալ ուղիով են ընթացել բանասերները— Պատմության զբաղված ժամանակը իջեցրել են ներքև. այն-ինչ այդ անախրոնիզմները ուրիշ՝ շատ պարզ ու բնական բացատրություն ունին, այսինքն՝ որ դրանք խորենացու գրչին չեն պատկանում, այլ հետո մուծված են դանազան անհայտ մարդկանց ձեռքով և դանազան նպատակներով: ուրիշ խոսքով՝ խորենացու Պատմությունը մեզ

հասել է ոչ թե անաղարտ՝ սկզբնական կերպարանքով, այլ խմբադրված դրութեամբ, հավելումներով, կրճատումներով և այլ պատճառներով լեզվային փոփոխութիւններով, որոնցից ոմանք՝ կատարված են հատուկ դիտավորութեամբ, մյուսները պատահական կերպով:

Հենց առաջին անգամ, երբ 1892-ին տպագրվեց 'Կարիերի վերոնշխարհող' ևս թիֆլիսի «Մուրճ» ամսագրում դրեցի մի հոդված «Խորենացու նոր աղբյուր» վերնագրով, որի մեջ ցույց ավի, թե 1) Խորենացու Պատմութեան մեջ պակասում է մի կարևոր պատմութիւն— հայոց քրիստոնեութիւնը ընդունելու մասին, որ չէր կարող Խորենացու կողմից պանդառութեան կամ մոռացութեան արվել: 2) որ այդ պատմութիւնը պետք է զետեղված լինէր նրա Պատմութեան Ի գրքի 83-րդ գլխում, որտեղ ներկայումս պանում ենք Կոստանդիանոսի դարձի առասպելական պատմութիւնը, որովհետև նախընթաց 82-րդ գլխում Տրդատը գեռ հեթանոս է, իսկ 84-րդ գլխում արդեն քրիստոնյա է. ուրեմն նրա քրիստոնեութիւնը ընդունելու պատմութիւնը պետք է գրված լինէր 83-րդ գլխում: Նշանակում է Խորենացու իսկական դրած հայոց դարձի պատմութիւնը որոշ նպատակով գուրս է ձգված և փոխարինված է Կոստանդիանոսի դարձի պատմութեամբ (այս փոփոխութեան նպատակը հետո քաջատրվեց): 3) Այս a priori ենթադրութիւնը ապացուցվում է Ասողիկի Պատմութեան հետ համեմատելով: Ասողիկը, ըստ իր խոստման, հավատարմորեն համառոտում է Խորենացու Պատմութիւնը. նա Խորենացուց համառոտել է երկրորդ գրքի 80, 81, 82, 84, 85-րդ... գլուխները: Իսկ 83-րդ գլխից, Կոստանդիանոսի պատմութիւնից ոչ մի բառ չունի. դրա փոխարեն նա այդ տեղում դնում է հայոց դարձի պատմութիւնը (Հոփսիմյանց դալը, նահատակութիւնը, Տրդատի հիվանդանալը, Դրիդորի քարոզութիւնը և այլն), այսինքն այն պատմութիւնը, որ այժմյան ձեռագիրներում չկա, այլ մենք a priori ենթադրեցինք: Սրանից եզրակացնում ենք, որ Ասողիկը XI դարի բուն սկզբում ունեցել է Խորենացու Պատմութեան մի ձեռագիր սկզբնական ձևով, Խորենացու գրած հայոց դարձի պատմութեամբ, ուրեմն Կոստանդիանոսի դարձի պատմութիւնը հետսամուտ հավելված է, որով փոխարինված է սկզբնագիրը:

Իմ այս հոդվածը հավանութիւն գտաւ. Խորենացու ընադրի քննութեան հարցը հերթական ընթացք ստացաւ: Այս ուղղութեամբ քննութիւնը շարունակվելով՝ երևան եկան ուրիշ շատ խմբագրական փոփոխութիւններ և հավելվածներ: Իրրե օրինակ հիշենք մի քանիսը: Խորենացու վենետիկյան տպագրութիւնների մեջ գրերի գլուտի պատմութեան գլխում ('Ի. 53) կարդում ենք. «Թաթմէ ձեռն աջոյ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի» որից բանասերները հետեցրին, թե Խորենացին սուրբ Մեսրոպին վերագրել է միայն ձայնավոր գրերի գլուտը, որ կրկնակի սխալ է: «Պատմագիրք հայոց» հրատարակութեան մեջ Խորենացու Պատմութիւնը տպագրված է 24 ձեռագրի բաղդատութեամբ: Դուրս եկաւ, որ այդ ձայնավորները կան միայն մի ձեռագրում, մյուս 23-ը չունին. ուրեմն այս գրերը մի որևէ ձեռագրի լուսանցքում ավելացած են եղել որևէ ընթերցողի ձեռքով. հաջորդ արտագրողը այդ լուսանցքային հավելվածը մուծել է բնագրի մեջ, և այս աղավաղված ձեռագրի ընթերցվածը Վենետիկի հրատարակիչներն անընտրողաբար մուծել են իրենց տպագրութեան մեջ: Պատմագրքի հրատարակութեան մեջ դուրս են ձգված այս անհարազատ ձայնավորները:

Թոմա Արծրունին նկարագրում է Տրդատ թագավորի շքեղ թաղումը և ասում է, թե զա գրված է Քորենացու Պատմության Բ գրքի վերջին գլուխում. իսկ մեր ունեցած օրինակների մեջ այս գլխում պատմված է Տրդատի մահը թունավորումից, բայց չկա ոչ մի խոսք թաղման, այն էլ շքեղ թաղման մասին: Երա շքեղ թաղումը պատմվում է մի Հայաստավորքի մեջ: Նույնպես մի ուրիշ ձեռագրում պատմվում է մ. Սահակի տեսիլքը, նրա մեկնությունը, որոնք նույնպես այժմյան մյուս ձեռագիրներից ոչ մեկում չկան, այլ կան Դ. Փարպեցու Պատմության մեջ: Այս երկու դեպքում էլ շքեղ թաղման վերաբերյալ հատվածը և Ս. Սահակի տեսիլքը արդյոք սկզբնապես եղել են Քորենացուց զրված ու հետո դուրս ձգված, թե, որ ավելի հավանական է, հետսամուտ հավելվածներ են եղել մի քանի ձեռագիրներում: Նշանակություն չունի ներկա դեպքում. հակառակն այն է, որ Քորենացու Պատմությունը ենթարկվել է փոփոխության—կամ կրճատվել է կամ ընդարձակվել: Քորենացին Ա. գրքի երկրորդ գլխում հիշում է, որ ուսուցնասեր հույները ուրիշ ազգերից վերցրել են նշանավոր արվեստներ, և հետո բերում է հանելուկային տառեր—«որպես զԱյր առ Բէ և զԹ առ Փիւ» և այլն, որոնցից առաջին տառերը նշանակում են արվեստները սկզբնազբերով (Ա. — աստղաբաշխություն, Թ. — թվագիտություն), իսկ երկրորդ տառերը նշանակում են սկզբնազրով այն ազգերը, որոնցից հույները փոխ են առել այդ արվեստները (առ Բ—առ քաղղէացիս, առ Փ—առ փիւնիկեցիս): Այսպիսի տառական անհասկանալի հանելուկ չէր կարող գրել Քորենացին, որ ինքն է մեկնում ու ճշմարտում առասպելները: Այս տողերը նույնպես որևէ ձեռագրի լուսանցքից մուծվել են Պատմության մեջ: Մի անհայտ մարդ Դավիթ Անհաղթի Սահմանաց գրքում կարդալով, որ աստղաբաշխությունը գտել են քաղղէացիք, թվաբանությունը փյունիկեցիք, իր հիշողության համար այդ անունները սկզբը նաղրերով նշանակել է իր ունեցած Պատմության լուսանցքում, որը հաջորդ արտագրողը լուսանցքից մուծել է բնադրի մեջ և այս ընդմիջարկված ձեռագրից ծագել են մեր ձեռքը հասած Պատմության ձեռագիրները: Որ Քորենացու Պատմությունը ենթարկված է խմբագրությունների, կրում է ընդմիջարկություններ, պատմական ու լեզվային փոփոխություններ՝ այժմ ընդունված է ընդհանրապես ն. Մառը գտնում է, որ Պատմության այսպիսի խմբագրություններ կատարվել են ոչ մի անգամ, քանի որ Քորենացու Պատմությունը իբրև դասագիրք է ծառայել հայ ժողովրդին: Եվ երբ նու Քորենացու Պատմությունը համարում է VIII—IX դարի գործ՝ նա աչքի առաջ ունի այս խմբագրված Պատմությունը, որ հասել է մեր ձեռքը, և ոչ թե Քորենացու սկզբնական գրվածքը V դարում: Այս կերպով վերանում ես այն առարկությունները, որ բերվում էին իբրև փաստ Քորենացու Պատմության ուղղարկի գործ լինելուն. անախրոնիզմները լիովին բացատրվում են հետագա խմբագրությունների միջոցով:

Բայց սրանից անկախ գոյություն ունին բազմաթիվ գրավոր փաստեր, որոնք ապացուցանում են, թե Քորենացին իրոք ապրել ու գրել է V դարում, որոնք հերքել կամ անտես անել անհնար է:

Մանթեթանանք այս փաստերին:

Թողնելով IX և VIII դարերից վիայությունները՝ կսկսենք VII դարից: VII դարի 80-ական թվականներին Ան. Շիրազունին գրել է մի ժամանակա-

գրություն, որ սկսվում է «ի Մովսիսէ Խորենացւոյ և յԱնգրիասայ» բառերով և մի ընդարձակ հատված բառացի բերում է Խորենացու Պատմությունից, Աղամից սկսած մինչև ջրհեղեղը:

Նույն դարի 60-ական թվականների սկզբին Սևբոս իր Պատմության Դ գլխի վերնագրում դնում է. «Արդ՝ եթէ կամիս, ով ընթերցասէր, Երկրորդեցից ի պատմութեանցն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարոնացւոյ, հաւաստի և ճշմարիտ մատենագրաց, գորդի ի հօրէ ճանաչել»:

Այս վերնագրին համապատասխան՝ գլուխն սկսվում է ընդարձակ հատվածով Խորենացուց հայ Արշակունի թագավորների մասին (այստեղ հիշված Ստեփանոս Տարոնացին Ասողիկը չէ, այլ ուրիշ մի հեղինակ, որը էր աշակերտ Մեսրոպայ»): որի ժամանակագրական գրվածքից մի կտոր ֆագել է ու հրատարակվել է և որը բացի Սեբեոսից երկու անգամ հիշված է ուրիշ տեղերում):

Նույն դարի 40-ական թվականներին (645—648 թ. թ.) հայոց եկեղեցական ժողովրդի մի թուղթ է գրում զազանաբանական հարցերի մասին՝ Կոստանդ կայսրին ուղարկելու համար: Թուղթը մեջ է բերում Սեբեոսը, Թղթի հեղինակները ցույց տալու համար, թե որքան սուբբ է ամուսնությունը բերում են մի այսպիսի անեկղոտ: Մի պյութագորյանի հարցնում են. կինը սղամարդու հետ հարաբերությունից հետո հրքան ժամանակ անց կարող է տաճար մտնել: Պյութագորյանը պատասխանում է. «Եթե ամուսնու մոտից՝ նույն օրն և ևթ, օտարի մոտից՝ ոչ երբեք»: Այս անեկղոտը բառացի առնված է Պիտոյից գրքից. որ Խորենացու թագմանածն է: (Սեբոսի մեջ աղավաղությամբ գրված է՝ օրէն է», որ նոր հրատարակության մեջ ուղղել են առ օրինս, ըստ Պիտոյից գրքի):

Նույն դարի 30-ական թվականներից էլ ունինք երկու արժեքավոր վկայություններ, ինչպես հայտնի է, Սեբեոսն իր Պատմության սկզբի՝ առասպելական ժամանակների համար օգտվել է Մարաբաս Մծուրնացու մատյանից, որ ձեռք է բերել Միջագետքում նրա աշակերտներից: Մծուրնացու այս աղբյուրի մասին հայտնված են շատ կարծիքներ. համարել են թե այդ գրվածքը Խորենացու գրած նախնական ուրվագիծն է եղել, որը հետո նա մշակել ու զետեղել է իր Պատմության մեջ. համարել են, թե այդ գրվածքը հայոց ամենահին պատմական գրվածքն է. համենայն դեպս համարել են, որ նա Խորենացու Պատմությունից առաջ էր գրված և Խորենացին օգտվել է նրանից իբրև աղբյուրից: Իայց զուրս է գալիս, որ այս բոլոր ենթադրությունները սխալ են: Դննությունը բոլորովին հակառակն է ցույց տալիս: Մծուրնացու մատյանը, ինչպես երևում է Սեբոսի մոթ տեղեկություններից, հորինված է այն ժամանակ, երբ Մծբինում Սանատրուկ թագավորի պալատի փլատակները պեղում էին, որպեսզի պալատի սյուները տանին Պարսկաստան: Փլատակների տակից դուրս է գալիս մի արձան, որի վրա Աղաթանգեղոսը Տրդատի հրամանով պրոշմել է հայոց և ուարթևաղ թագավորների անունները: Մծուրնացին տեսել է այս արձանագրությունը և նրանից մատյան է կաղմել: Որից և օգտվել է Սեբոսը: Սյուները Պարսկաստան տանելու տեղեկությունը կապվում է Խոսրով Ա. Անուշիրվանի հետ, որ Վեհ Անշատոք քաղաքը շինելու ժամանակ զանազան տեղերից արվեստի առարկաներ է բերել տալիս Պարսկաստան: Լիթե ձիշտ է այս ենթադրությունը սույա Մծուրնացու մատյանը գրված պետք

է լինի VII դարի 30-ական թվականներին: Արդ՝ այս զրկածքում մենք հանդիպում ենք երկու փաստի, որոնք ամենասկիսկապակաւ արդուն էլ կհամոզեն, թե Սերեոսին իբրեւ աղբյուր ծառայող Մարաբաս Մծուրնացին անշուշտ ողտվել է Մովսես Խորենացու Պատմությանից:

Առաջին փաստը հետեւյալն է. Մծուրնացու Պատմության մեջ մի քանի անգամ պատահում են «Տիտանեան Բել», «Արքայն Տիտանեան», «Տիտանեան» արտահայտութիւնները: Բոլորովին նույն ձևով այս բառերը պատահում են նաև Խորենացու Պատմության մեջ: Տարակույս չկա, որ սրանցից մեկն ողտվել է մյուսից: Ո՞վ է հեղինակը և ով է ողտվողը: Երբ քննում ենք երկու բնագիրները՝ նկատում ենք, որ Մծուրնացին Տիտանեան բառը դործ է ածում իբրեւ պատրաստ մականուն, առանց որևէ բացատրության: Այնինչ Խորենացու մոտ այս երկու բառն էլ բացատրված են, ինչպես ինքն է ասում՝ «ճշմարտված»՝ ևն: Նա (Ա, 6) բերում է Բերոսոսյան Արքիլայից մի հատված—«Լինէին իշխանք երկրի Զրուան, Տիտան և Յապետոսթէ», և անմիջապէս մեկնում՝ «ճշմարտում» է, ասելով. «որ ինչ թուին Սեմ, Քամ, Յարեթ»: Այնպես որ, ըստ Խորենացու, հեթանոսական Տիտանը Ս. Գրքի մեջ հիշված Քամն է, Նոյի երկրորդ որդին: Հաջորդ գլխում Խորենացին աշխատում է ապացուցանել, թե արտաքին հեղինակների Բելը Ս. Գրքի ներքովին է, Քամի որդին: Ուրեմն Խորենացու բացատրութեամբ առասպելական Տիտանյան Բելը ոչ այլ ոք է, քան Ս. Գրքի մեջ հիշատակված պատմական Քամյան ներքովին: Պետք է ավելացնեմ, որ այս համեմատութիւնը կարող էր անել միայն Խորենացին, և ոչ այլ ոք, որովհետև այս համեմատութեան հիմք կաղմող Սիրիլլայի տողը միայն նրան է հայտնի, առասպելների ճշմարտելու սովորութիւնը միայն նրան է հատուկ, և Բել = ներքովին նույնացումը միայն նրան է պատկանում: Սրանից կզրահացնում ենք, որ «Տիտանեան Բէլ» և այլն, հորջորջումների ստեղծողը Խորենացին է, իսկ Մծուրնացին նրանից է տեղի իբրեւ պատրաստ մականուններ:

Երկրորդ փաստը հետեւյալն է. Սերեոսը Մծուրնացու խոսքերով պատմում է, թե Հայկը եկավ բնակեցավ «ի տանն որ զառաջինն շինեալ էր Զրուանայ հօրն և եղբարքն հանդերձ»: Մի հանելուկային խոսք. չէ հասկացվում, թե ի՞նչ տուն է, որ առաջուց շինված է եղել, ով է այդ Զրուանը, ինչու է կոչված հայր, ինչու է անտեղի դործածված «և» շաղկապը («հօրն և եղբարքն հանդերձ»): Այս հանելուկները մեկնելու միակ աղբյուրն է Խորենացին. նա գրում է (Ա, 6), թե ջրհեղեղից հետո Նոյի երեք որդիներից մեկը՝ Սեմը, որին Արեւելքում Զրվան են ասում, յուր օրվոց հետ միասին գալիս է Արեւելք երկիրը զիտելու: Մի լեռան ստորոտում, որ Սեմի անունով Սիմ կոչվեց, մի զետի ափին, նրանք տուն են շինում և այնտեղ բնակութիւն է հաստատում Սեմի որդիներից մեկը, Տարբանը: յուր եղբայրների հետ. նրա անունով զավառը կոչվել է Տարոն: Սրանից ամեն ինչ բացատրվում է Մծուրնացու անհասկանալի խոսքում: Անտեղի «և» շաղկապն էլ բացատրվում է. պետք է լիներ՝ «Զրուանայ հօրն՝ Տարբանաւ որդւովն և եղբարքն հանդերձ»—Զրվան հայրը յուր Տարբան որդու և նրա եղբայրների հետ:

Թողնելով ուրիշ փաստեր՝ այս երկուսն էլ բավական են համոզելու,

թե Մարաբաս Մծուրնացին օգտվել է Քորենացու Պատմությունից, որ, ուրեմն, յայտնի ու հռչակված է եղել VII դարի 30-ական թվականներին: Մի-ինույն ժամանակ վերանում է վարադույրը Մծուրնացու վրայից, փարատ-վում են նրա մասին յայտնված անհիմն կարծիքները, և նա ներկայանում է մեզ իբրև մի միտումնավոր կոմպիլատոր Քորենացու Պատմության:

Էլի բարձրանալ վեր, մինչև VII դարի առաջին տասնամյակը: Այստեղ դարձյալ հանդիպում ենք Քորենացու անվան՝ իբրև դավանաբանական թուղթ գրող հեղինակի, իբրեք թղթոցի սօր տպված է մի ճառ, որտեղ պաշտ-պանվում է միաբնակությունը և հերքվում է երկարնակությունը: Ուսու-կրում է վերնագիր. «Երանելի քերթողահօրն Մովսիսի (Քորենացի) եպիս-կոպոսին: Երվածքը այնքան ուտար է Քորենացու ոճից, որ բանասերների մեծ մասը նրան համարում են կեղծված կամ մի ուրիշ Մովսիսի գործ, իսկ գրության ժամանակը, լեզվից դատելով, ակադեմիկոս Հ. Մանանդյանը բնթաղում է VI դարի վերջերը կամ VII-ի սկիզբները: Բայց ով է կեղծել այս գրությունը Մովսես Քորենացու անունով կամ ինչ նպատակով, Ֆեոմ էր անորոշ: Եվ ահա մի նպաստված տեղից յույս է ծագում այս մութ հար-ցի վրա: Վրաց Արսեն կաթողիկոսը (IX դար), որ լավատեղյակ էր դավանա-բանական խնդիրներին, դրում է, թե հայոց Ղուբիտաս կաթողիկոսը և Հո-հան Մայրսարգսյանցին կեղծ գրություններ են հորինել երկաթնակների դեմ և վերագրել են ուղղափառ վարդապետներին, ի միջի այլոց Մովսեսին: Այս նարեղ վկայությունը բաց է անում կեղծիքի նպատակը և հորինողների անունը: Գոմիտասը կաթողիկոս դարձավ 616 թվին, և այս ժամանակը շատ լավ հարմարում է ակադեմիկոս Մանանդյանի բնթաղած ժամանակին: Իսկ մեր ինչպիսի համար կարևորն այն է, որ VII դարի 10-ական թվականներին Մովսես Քորենացու անունը այնքան հռչակված ու հեղինակավոր է եղել, որ Գոմիտաս կաթողիկոսը օգտակար է համարել նրա անունով դավանա-բանական ճառ գրել՝ հայերին երկաթնակությունից (քաղկեդոնականու-թյուն և նեստորականություն) զրուշացնելու համար և միանգամայն ցույց տալու, թե Քորենացին ինքը համոզված միաբնակ (հակաքաղկեդոնական) է եղել:

Վեցերորդ դարից մեզ հեն հասել պատմական բովանդակությամբ պրվածքներ, որոնց մեջ առիթ լինել հիշել Քորենացուն: Այս դարի մեր մատենագրությունն ընդհանրապես թարգմանական է հունաբան ոճով: Միակ պատմական գրվածքը, Պետրոս Սյունյացի եպիսկոպոսի, ներկայումս կորած է: Թեպետ Ստ. Օրբելյանը օգտվել է նրանից: Բայց բարեբախտաբար պահ-պանվել են տեղեկություններ երկու անձի մասին, որոնք VI դարի կեսե-րին հիշատակված են իբրև աշակերտներ Մովսես Քորենացու: Մեկն է Նույն Սյունյացի Պետրոս եպիսկոպոսը. որին Օրբելյանը հիշում է երեք անգամ և երև. անգամից էլ ավելացնում է. «որ էր աշակերտ Մովսիսի Քորենացու»: Սյունյան է Եղրաս Անպեղացին, ճարտասանության ուսուցիչ և ծաղկեցնող, որին Սամուել Անեցին կոչում է «Աշակերտ Մովսիսի եպիսկոպոսի Բաղրևան-դյան»: Երկրորդ ցուցումը կարևոր է նաև նրանով, որ հաստատում է Մով-սես Քորենացու Բաղրևանգի եպիսկոպոս լինելը, ինչպես գրված է Դ. Ալի-շանի հիշած Կանոնագրքում:

Հինդերորդ դարի վերջերից ունինք մի վկայություն Դ. Փարպեցու թղթում Մովսես Փլիսոսոփոսի մասին, որը Նույն Մովսես Քերթողահայրն

է, այսինքն Խորենացին Փարպեցին զրոււմ է. «Երանելի Մովսէս Փիլիսոփոսը սինչ ապրում էր՝ հրեշտակներին ման վարք ունեւր. չէ՞ որ նրան այդ արեգայական խումբը տեղից անդ հալածեց, չէ՞ որ այն լուսավորչին և նրա տգիտահալած զբքերը տգիտաբար կոչում էին փաթաղ իկէս (— աղճատված, աղավաղված) և ուրիշ շատ բաներով էլ նրան վշտացնելուց հետո խաբէական եպիսկոպոսութիւնն նրան տալով իբրև մահադեղ, սրբի ձայնը կտրեցին»։ «Արեղայն ասորական բառ է, փաթաղ, իկէս նույնպէս ասորական բառեր են, նշանակում է Խորենացուն հալածելիս են եղել ասորամիտ հայ եկեղեցականներ, հավանորեն այն պատճառով, որ Խորենացին հունասեր և քաղկեդոնական էր, իսկ ասորամիտները հակաքաղկեդոնական, ինչպէս ուրիշ տեղի ապացուցել ենք։ Այս հալածանքներէ հիշատակութիւնը բոլորովին համապատասխանում է այն տեղեկութիւններին, որ Խորենացին ինքը հաղորդում է իր մասին Բ գրքի 82-րդ գլխում և Ողբի մեջ։ Խորենացին սակայն չի հիշում, թէ ինքը եպիսկոպոս է եղել ձեռնադրված, թեպետ ամբողջ պատմութեան ողուց երևում է, թէ նա բարձր դիրքի տեր և հեղինակութիւն վայելող անձն է եղել Պատմութիւնը զրկու ժամանակ։ Բայց այս թերին էլ լրանում է երկու հիշատակարանով։ Ղ. Ալիշանը «Այրարատում» (էջ 56) բերում է Կանոնադրքից մի հատված, որի մեջ ասված է, թէ սուրբ Գրիգորից սկսած Բագրևանդ և Աբշարունիք մի եպիսկոպոսի թեմ էին կազմում մինչև Երանելի քերթողահայր Մովսէս եպիսկոպոսի վախճանելը, այնուհետև իրարուց բաժանվեցին։ Երկրորդ հիշատակարանն է Սամուել Անեցու վերք բերված վկայութիւնը, թէ Նզրաս Անգեղացին եղել է աշակերտ Մովսիսի եպիսկոպոսի Բագրևանդայ։ Այնպէս որ Ղազար Փարպեցու վկայութիւնը, Խորենացու իր մասին հաղորդած տեղեկութիւնները և այս կողմնակի հիշատակարանները բոլորովին համերաշխ են միմյանց հետ և մեկը մյուսին լրացնում են։ Սրանց հետ համերաշխ է և այն սրտառուչ գեղեցիկ ավանդութիւնը, թէ Գլուտ կաթողիկոսը պատահաբար գտել է անհայտութեան մեջ թաղված իր վաղեմի ընկեր Մովսէսին, ճանաչել է նրան, համբուրվել է հետը և բերել ձեռնադրել է Բագրևանդի եպիսկոպոս։

Ես մի կողմ եմ թողնում այն բազմատեսակ ապացույցները, որ կարելի է դուրս բերել Խորենացու Պատմութեան ուշագիւր ուսումնասիրութիւնից։ (Այս մասին տեսեք իմ «Խորենացու առեղծվածի շուրջը», հավելած առաջին)։ Բավականանում եմ օտար և տարբեր աղբյուրներից բերված այս զրավոր անկասկածելի փաստերով, որոնք բոլորը միաբան նույն բանն են վկայում, որ Խորենացին արդարև Վ դարի հեղինակ է և գրել է Վ դարի վերջերում, ինչպէս ինքն էլ հայտնում է։ Սրան հակասող կարծիքները սխալ են և արդյունք են թյուրիմացութիւնների։

Ամփոփելով վերը ասածներու՝ ես գտնում եմ, որ

Ողիշի Պատմութիւնը գրված է 461-ին։

Ազաթանդեղոսը գրված է 461—465-ին։

Հարութայի Պատմութեան հայերեն թարգմանութիւնը և նրան հետևող Թադեոս Կոստայի Վկայարանութիւնը գրված են 465—470-ին։

Փավստոսի Պատմութիւնը գրված է շուրջ 475-ին։

Խորենացու Պատմութիւնը գրված է 483—485-ին։

Ղազար Փարպեցու Պատմութիւնը գրված է 490-ական թվականներին։

Արամ Բ. Մանասյան

Хронологические вопросы в древне-армянской литературе

(Р е з ю м е)

Автор задался целью установить время возникновения некоторых исторических памятников древне-армянской литературы, относительно которых мнения арменистов расходятся даже на несколько столетий.

Исходным пунктом для автора является тот знаменательный факт, что до начала шестидесятых годов V века имя Григория, просветителя Армении, нигде не упоминается: о нем не говорят ни Корюн, ни Егише, даже в таких случаях, когда необходимо его упомянуть. Более того, Егише приводит соборное послание армян императору Феодосию, в котором говорится, что царь Трдат был обращен в христианскую веру епископом Рима. Отсюда следует, что до 461 года, когда написана История Егише, Григорий Просветитель не был известен; он впервые упоминается в Истории Агафангела, т. е. после 461 года. Анонимный автор этой Истории, скрывающийся под вымышленным прозвищем Агафангела, (— добрый вестник или добрая весть — евангелие), несомненно один из тех молодых людей, которые получили образование в Византии, начиная с тридцатых годов V века. Он ярый грекофил, что ясно обнаруживается во всей его Истории. По мнению автора статьи, автором этой Истории является католикос Гют, который как раз в это время занимал патриарший престол и был известен как образованнейший человек, убежденный грекофил и устроитель церковного богослужения.

Против грекофильствующих тенденций Агафангеловской Истории выступала сирофильствующая партия в Армении. В противовес греческому миссионеру Григорию этой партией был выдвинут апостол Фаддей, выходец из Сирии, получивший мученическую смерть от рук царя Санатрука, ставший, таким образом, первым просветителем и апостолом Армении.

Это житие апостола Фаддея составлено, без сомнения, после Истории Агафангела, так как в поучении св. Григория Фаддей как апостол Армении не упоминается; но оно составлено раньше Истории Фауста, т. к. последнему это житие знакомо, и он называет Фаддея апостолом Армении, убитым Санатруком. Следовательно, возникновение означенного жития можно датировать промежутком времени между Агафангелом и Фаустом, приблизительно 470 годом.

История Фауста Бюзандани (тоже псевдоним) появилась после Агафангела и жития Фаддея, т. к. автор подробно знаком с Историей Агафангела и продолжает ее, т. е. начинает повествование оттуда, где остановилась История Агафангела, именно с Хосрова Малого, наследника Трдата, и католикоса Вртанеса, сына Григория; он же армянский патриарший престол называет престолом Фаддея,

а паря Санатрука апостолюбийцей. С другой стороны и Моисей Хоренский знает его Историю и пользуется ею, не называя по имени. Следовательно, эта История появилась между 470 и 485 годами, приблизительно около 475 года. Анонимный автор греческого образования не получал, он питомец армянских школ, любитель сказаний и преданий, любовно им собранных и помещенных в своей Истории.

Время составления Истории М. Хоренского арменисты в последние полвека, ввиду некоторых анахронизмов, замечаемых в ней, отнесли к более и более позднему времени, доведя до шестидесятих годов девятого века, вопреки ясному свидетельству автора, что он был учеником Саака и Месропа, т. е. жил и писал в V веке.

Автор статьи не согласен с этими крайними мнениями; анахронизмы в Истории Хоренского он объясняет интерполяциями во время неоднократных редактирований его Истории, что подтверждается многими фактами. А истинное время жизни Хоренского и составления его Истории он устанавливает на основании многочисленных литературных свидетельств. Он показывает, что на протяжении VII века разные авторы шесть раз называют по имени Моисея Хоренского и его Историю и пользуются ею, приводя из нее цитаты, или используют авторитет Хоренского для подложного монофизитического трактата.

С VI века не дошло до нас историческое сочинение, где упоминалось бы о Хоренском или его Истории. Зато в половине этого столетия упоминаются два ученых человека, Петрос, епископ Сюнийский, и ритор Езрас Аггекаци, которые названы учениками М. Хоренского. А в конце V века мы имеем свидетельство Лазаря Парпеци о „блаженном философе Моисее“, причем сведения, сообщенные Лазарем об этом Моисее, вполне совпадают с автобиографическими сведениями самого Хоренского и находятся в одном синтаксисе. Следовательно, для Истории Хоренского надо восстановить традиционную дату: около 483—485 г.

Таким образом, автор статьи устанавливает следующие даты для вышеупомянутых литературных памятников:

Для Египсе—461 год.

Для Агафангела 461—465 гг.

Для жития ап. Фаддея—465—470 гг.

Для Фауста Бюзандаци—около 475 г.

Для Истории Хоренского—483—485 гг.

Для Истории Лазаря Парпеци—490-е годы.